Ապաստանի հայցերի մշակման պարզեցված ընթացակարգ

Հաճախ տրվող հարցեր

Բովանդակություն.

Ու՞մ համար է այս ՀՏՀ բաժինը 2
Որո՞նք են առավել կարևոր բաները, որ պետք է իմանալ 2
Ի՞նչ է «ապաստանի հայցերի մշակման պարզեցված ընթացակարգը» 2
Ի՞նչ կպատահի, եթե չլրացնեմ ու չվերադարձնեմ հարցաթերթիկը 3
Կարելի՞ է ինքնուրույն լրացնել ու ներկայացնել ձևը 3
Որո՞նք են հարցաթերթիկը լրացնելու հետ կապված ռիսկերը 4
Ինչպե՞ս կարելի է ստանալ ներգաղթի հարցերով զբաղվող գրանցված խորհրդատուի օգնություն 5
Ես ունեմ գրանցված խորհրդատու, ի՞նչ անեմ 5
Ես չունեմ գրանցված խորհրդատու, ինչպե՞ս գտնեմ որևէ մեկի 6
Իրավաբանական օգնություն տրամադրող իրավաբաններ 6
Ներգաղթային ծառայության հանձնակատարի գրասենյակի խորհրդատուներ 6
Այլ իրավաբաններ 7
Կարելի՞ է ընկերոջս խնդրել օգնել ինձ 7
Ինչու՞ է ընկերոջ օգնությանը դիմելը սովորաբար վատ գաղափար 7
Կարո՞ղ է փախստականների հարցերով զբաղվող որևէ տեղական կազմակերպություն օգնել ինձ 8
Եթե վերադարձնեմ հարցաթերթիկը, ե՞րբ կարելի է ակնկալել որոշումը 9
Ես խնդրել եմ ժամկետի երկարաձգում, ի՞նչ անեմ հետո 9
Ի՞նչ կարող եմ անել, եթե իմ հայցը համարվի հետ կանչված 9
Ի՞նչ է դատական վերահսկողությունը 9
Ի՞նչ է նշանակում «լրացուցիչ նյութեր նոր հայցի վերաբերյալ» 10

Ու՞մ համար է այս ՀՏՀ բաժինը

Այս ՀՏՀ բաժինը Ձեզ համար է, եթե՝

- Դուք Աֆղանստանի, Էրիթրեայի, Լիբիայի, Սիրիայի կամ Եմենի քաղաքացի եք և
- դիմել եք ապաստանի համար նախքան 2022 թ. հունիսի 28-ը և
- ստացել եք ապաստանի հարցաթերթիկ՝ լրացնելու և վերադարձնելու, և
- Դուք առանց մեծահասակների ուղեկցության անչափահաս չեք

Եթե չեք կարող նշել վերևի բոլոր չորս վանդակները, ապա այս ՀՏՀ-ն Ձեզ համար չէ (թեև, այնուամենայնիվ, կարող է պարունակել որոշ օգտակար տեղեկություններ...)

Որո՞նք են առավել կարևոր բաները, որ պետք է իմանալ

- Եթե ապաստանի հարցաթերթիկ եք ստանում, այն ունի ներկայացնելու վերջնաժամկետ.
- Խորհուրդ ենք տալիս լրացնելու համար դիմել ներգաղթի հարցերով զբաղվող գրանցված խորհրդատուի օգնությանը.
- Եթե չեք կարողանում գտնել ներգաղթի հարցերով զբաղվող գրանցված խորհրդատու, կարող եք խնդրել վերջնաժամկետի երկարաձգում.
- Բարեգործական ընկերությունները և փախստականների հարցերով զբաղվող համայնքային կազմակերպությունները կարող են օգնել Ձեզ երկարաձգման համար դիմելու գործում.
- Եթե ոչինչ չանեք, Ձեր հայցը կհամարվի հետ կանչված, և դա վատ է:

Ի՞նչ է «ապաստանի հայցերի մշակման պարզեցված ընթացակարգը»

Ապաստանի հայցերի մշակման պարզեցված ընթացակարգը ապաստանի հայցերի վերաբերյալ արագ որոշումներ կայացնելու նոր գործընթաց է: Այն ներդրվել է 2023 թվականի փետրվարին Միացյալ Թագավորության Վիզաների և ներգաղթի ծառայության (ՄԹՎՆ) կողմից, որը Ներքին գործերի նախարարության վարչություն է և զբաղվում է ներգաղթի դիմումների և ապաստանի հայցերի հարցերով:

ՄԹՎՆ-ն «ապաստանի հարցաթերթիկ» կուղարկի Ձեզ և կխնդրի լրացնել անգլերեն լեզվով ու վերադարձնել **20 աշխատանքային օրվա ընթացքում**: Ձեր տրամադրած տեղեկությունները կօգտագործվեն հայցի վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Եթե որոշեն, որ համապատասխանում եք ապաստանի կամ մարդասիրական պաշտպանության վերաբերյալ պահանջներին.

- պետք է Ձեզ շնորհեն կարգավիճակ՝ *առանց* ապաստանի տրամադրման հարցազրույցի հրավիրելու.
- մենք չգիտենք, թե ինչ ժամանակում կշնորհվի կարգավիճակը, բայց այս հարցաթերթիկը լրացնելու նպատակը գործընթացն արագացնելն է:

Եթե վստահ չլինեն, որ համապատասխանում եք ապաստանի կամ մարդասիրական պաշտպանության վերաբերյալ պահանջներին.

- պետք է Ձեզ հրավիրեն հարցազրույցի.
- Դուք կարող եք տրամադրել նաև լրացուցիչ ապացույցներ.
- հարցազրույցից հետո կարող են շնորհել կարգավիճակը, ինչպես նաև՝ մերժել:

Առանց հարցազրույցի չեն կարող **մերժել** ապաստանի տրամադրումը Ձեզ:

Ի՞նչ կպատահի, եթե չլրացնեմ ու չվերադարձնեմ հարցաթերթիկը

Եթե չլրացնեք և ժամանակին չվերադարձնեք հարցաթերթիկը, ՄԹՎՆ-ն կարող է որոշել «**հետ կանչված համարել Ձեր հայցը**»:

Սա ավելի վատ է, քան մերժումը.

- բողոքարկման իրավունք չկա
- այլևս չեք ունենա ապաստանի առկախ հայց
- այլևս իրավազոր չեք լինի ստանալու ապաստանի տրամադրման հետ կապված աջակցություն
- հնարավոր է՝ զրկվեք մինչև 2022 թ. հունիսի 28-ը հայցած բոլոր նպաստներից

Այնուամենայնիվ, կարող է լինել այս խնդրի լուծման միջոց (տես ստորև), բայց դա կպահանջի ավելի երկար ժամանակ և կարող է հանգեցնել նվազ նպաստավոր կարգավիճակի:

Դուք կարող եք խնդրել վերջնաժամկետի երկարաձգում, եթե չկարողանաք ժամանակին գտնել որևէ մեկի, ով կօգնի Ձեզ:

Կարելի՞ է ինքնուրույն լրացնել ու ներկայացնել ձևը

Այո, կարելի է: Սակայն, սովորաբար ավելի լավ է գտնել ներգաղթի հարցերով զբաղվող գրանցված խորհրդատու՝ Ձեզ օգնելու համար: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ռիսկեր կան ձևաթղթում ինչ-որ սխալ անելու դեպքում:

Ստորև տրված է լրացուցիչ տեղեկատվություն ներգաղթի հարցերով զբաղվող գրանցված խորհրդատուների վերաբերյալ:

Որո՞նք են հարցաթերթիկը լրացնելու հետ կապված ռիսկերը

Ինչ վերաբերում է հարցաթերթիկը լրացնելուն, կան որոշ բաներ, որոնք կարող եք սխալ անել.

- բաց թողնել կարևոր տեղեկություն
- կատարել «փաստական սխալներ» (այսինքն՝ Ձեր կյանքի վերաբերյալ սխալներ)
- ներառել ոչ տեղին տեղեկություններ
- լինել անհստակ կամ շփոթեցնող
- ինչ-որ սուտ ասել կամ տեղեկություն թաքցնել

Այս ամենը կարող է ազդել հետևյալի վրա՝

- արդյոք ՄԹՎՆ-ն հավատում է Ձեր պատմությանը
- արդյոք ՄԹՎՆ-ն կարծում է, որ Դուք Ձեր հայցի մեջ նշած երկրի քաղաքացին եք
- արդյոք ՄԹՎՆ-ն կարծում է, որ Դուք պաշտպանության կարիք ունեք
- ապագա դիմումներ, որոնք Ձեր ընտանիքի անդամները կարող են ներկայացնել Միացյալ Թագավորությունում Ձեզ միանալ համար, եթե հայցը բավարարվի

Օրինակ՝ ՄԹՎՆ-ն կարող է մտածել, որ ճշմարտությունը չեք ասում, եթե՝

- ասում եք մի բան, որը տարբեր է նախորդած կամ հաջորդած հարցազրույցներում կամ հարցաթերթիկներում Ձեր ասածից՝ առանց որևէ բացատրություն տալու
- Դուք հակասական բաներ եք ասում հարցաթերթիկում
- եթե ասում եք մի բան, որը չի համապատասխանում ՄԹՎՆ-ի ունեցած տեղեկատվությանը, ներառյալ տեղեկություններ Ձեր հայրենի երկրի մասին
- եթե փորձում եք թաքցնել մի բան, որի մասին ՄԹՎՆ-ն գիտի մեկ այլ աղբյուրից
- եթե չեք կարողանում բացատրել անցյալում կատարած ինչ-որ բան, որի մասին ՄԹՎՆ-ն գիտի
- եթե սխալ անգլերեն բառեր եք օգտագործում, կամ եթե առցանց թարգմանական գործիքը փոխում է Ձեր բառերի իմաստը

Եթե համարեն, որ չեք ասում ճշմարտությունը, կարող են մերժել Ձեր հայցը: Նույնիսկ կարող են կասկածի տակ առնել Ձեր քաղաքացիությունը:

Կան այլ իրավիճակների օրինակներ, որոնք կարող են հանգեցնել անցանկալի արդյունքի:

- Եթե բաց թողնեք կարևոր տեղեկություն, ՄԹՎՆ-ն կարող է կարծել, որ Դուք վտանգված չեք, և այդ պատճառով մերժել Ձեր հայցը
    - Հնարավոր է՝ նաև մտածեն, որ չեք ասում ճշմարտությունը, եթե այն ավելացնեք ավելի ուշ
- Եթե Ձեր ձևակերպումներն անհստակ կամ շփոթեցնող լինեն, կամ նշեք բազմաթիվ անտեղի տեղեկություններ, Դուք կդժվարացնեք նրանց կողմից ճիշտ որոշում կայացնելը, քանի որ կարող են սխալ հասկանալ Ձեր հայցը
- Եթե մոռանաք նշել ընտանիքի անդամներին, որոնք գտնվում են Միացյալ թագավորության սահմաններից դուրս, մեծ է հավանականությունը, որ ընտանիքի այդ անդամները մերժում կստանան, երբ դիմեն Ձեզ միանալու համար

Այսպիսի բաներ կարող են պատահել՝ անկախ այն բանից՝ ինքնուրույն, թե ինչ-որ մեկի օգնությամբ եք լրացնում հարցաթերթիկը: Սակայն ներգաղթի հարցերով զբաղվող գրանցված խորհրդատուները պետք է ուշադիր լինեն և փորձեն ապահովել սխալների բացակայությունը:

Պետք է նշել, որ քաղաքականության նպատակը գործերի վերաբերյալ արագ որոշումներ կայացնելն է: Քանի որ չի ենթադրվում մերժում առանց հարցազրույցի, ավելի արագ է պաշտպանություն տրամադրելը, քան այն մերժելը: Անցյալ տարի Աֆղանստանի, Էրիթրեայի, Լիբիայի, Սիրիայի և Եմենի՝ ապաստանի հայց ներկայացրած քաղաքացիներին պաշտպանություն տրամադրելու ցուցանիշը գերազանցել է 95%-ը: Հետևաբար, մերժումները պետք է որ հազվադեպ լինեն: Այնուամենայնիվ, Ապաստանի հայցերի մշակման պարզեցված ընթացակարգի վերաբերյալ քաղաքականությունից պարզ է, որ ՄԹՎՆ-ն նախատեսում է որոշ մերժումներ: Քանի դեռ չգիտենք ավելին, լավագույն տարբերակը զգույշ լինելն է:

Ինչպե՞ս կարելի է ստանալ ներգաղթի հարցերով զբաղվող գրանցված խորհրդատուի օգնություն

Ներգաղթի հարցերով զբաղվող գրանցված խորհրդատուն պետք է.

- Ձեզ օգնի հասկանալ՝ արդյոք տեղեկությունը կարևոր կամ տեղին է, թե ոչ
- ստուգի ավելի վաղ կայացած հարցազրույցներն ու լրացված թղթերը և Ձեզ հարցնի անհամապատասխանությունների մասին
- համոզվի, որ հարցաթերթիկը լրացված է հստակորեն, ճշգրտորեն և անհրաժեշտ չափով ամբողջովին (կամ կարող է կցել բացատրագիր, որը հստակ ու ամբողջական է և պատասխանում է հարցերին)
- Ձեզ օգնի որոշել, թե ինչ ապացույցներ է հարկավոր ներառել, եթե այդպիսիք կան
- չկատարի նշանակալի սխալներ
- երբեք միտումնավոր չապակողմնորոշի կամ չթաքցնի գործին առնչվող տեղեկություններ
- նախքան Ձեր տրամադրած տեղեկությունները ներկայացնելը Ձեզ հետ հաստատի, որ դրանք ճիշտ են

Նա պարտավոր է գործել ըստ Ձեր շահերի (ինչպես Դուք եք սահմանել): Դուք կարող եք բողոք ներկայացնել կարգավորող մարմին, եթե նա կատարի հայցին վնասող որևէ արարք: Բայց նա հիմնվում է Ձեր խոսքի վրա, ուստի, եթե ինչ-որ սխալ թույլ տաք, նա չի կարող պատասխանատվություն կրել. ինքներդ նույնպես պետք է ուշադիր լինեք:

Շատ դեպքերում քրեորեն պատժելի արարք է համարվում, եթե կարգավորող մարմնում չգրանցված անձը տրամադրում է այս տեսակի օգնություն:

Ես ունեմ գրանցված խորհրդատու, ի՞նչ անեմ

Գերազանց է: Իսկույն կապ հաստատեք նրա հետ և տեսեք՝ արդյոք ժամադրություն կնշանակի ձևաթուղթը լրացնելու համար:

Եղեք համբերատար. հնարավոր է, որ նա ունենա այդ իրավիճակում գտնվող այլ հաճախորդներ:

Գուցե նա կարողանա վերջնաժամկետի երկարաձգում խնդրել ձևաթուղթը ներկայացնելու համար, եթե չունենա անհապաղ Ձեզ հետ հանդիպելու հնարավորություն:

Ես չունեմ գրանցված խորհրդատու, ինչպե՞ս գտնեմ որևէ մեկի

Սա դժվար խնդիր է այս պահին: Երկրի մեծ մասում ներգաղթի հարցերով անվճար խորհրդատվության ռեսուրսներն անբավարար են: Հնարավոր է՝ ստիպված լինեք ամիսներ սպասել պայմանավորվածություն ձեռք բերելու համար:

Իրավաբանական օգնություն տրամադրող իրավաբաններ

Լավագույն տարբերակը իրավաբանական օգնություն տրամադրող իրավաբան գտնելն է: Դուք իրավունք կունենաք ստանալու իրավաբանական օգնություն, եթե ստանում եք ապաստանի տրամադրման հետ կապված աջակցություն: Կարող եք իրավունք ունենալ նաև այլ հանգամանքներում, եթե քիչ եկամուտ կամ խնայողություններ ունեք:

Բացի այդ՝

- իրավաբանական օգնություն տրամադրող իրավաբանները պետք է հանձնեն ներգաղթային օրենսդրության իմացության քննություն, որպեսզի ստուգվեն նրանց գիտելիքները.
- իրավաբանական օգնությունը կարող է նաև փոխհատուցել բանավոր ու գրավոր թարգմանությունների և փորձագիտական հաշվետվությունների ծախսերը, եթե անհրաժեշտ է:

Կարող եք իրավաբանական օգնություն տրամադրող իրավաբան գտնել այստեղ: Մուտքագրեք Ձեր փոստային ինդեքսը: Անպայման նշեք «Ներգաղթ կամ ապաստան» վանդակը:

Ներգաղթային ծառայության հանձնակատարի գրասենյակի խորհրդատուներ

Ներգաղթային ծառայության հանձնակատարի գրասենյակի (ՆԾՀԳ) խորհրդատուները մասնագիտացած են ներգաղթի հարցերով և նույնպես պետք է հանձնեն քննություններ: Ձեզ հարկավոր է խորհրդատու, որն ունի 2-րդ աստիճանի որակավորում «Ապաստան և պաշտպանություն» կատեգորիայում:

ՆԾՀԳ խորհրդատուի երկու տեսակ կա՝ միջնորդավճար գանձող և միջնորդավճար չգանձող: «Միջնորդավճար գանձողը» նշանակում է, որ դեպքերի մեծ մասում պետք է վճարեք:

Կարող եք ՆԾՀԳ խորհրդատու գտնել այստեղ: Մուտքագրեք Ձեր փոստային ինդեքսը: «Խորհրդատվության տեսակները» (Types of advice) ցանկից ընտրեք «Մ2 հասցեական օգնություն» (L2 Casework): «Ապաստան կամ ներգաղթ» (Asylum or Immigration) ցանկից ընտրեք «Խորհրդատվություն ապաստանի և պաշտպանության վերաբերյալ» (Asylum And Protection Advice): Ըստ Ձեր կարիքների՝ ընտրեք «Միջնորդավճար գանձող» կամ «Միջնորդավճար չգանձող»: Միջնորդավճար գանձող խորհրդատուներն ամենայն հավանականությամբ մատչելի չեն լինի ծախսի առումով, եթե ստանում եք

ապաստանի տրամադրման հետ կապված աջակցություն: Ձեզնից չի պահանջվում գումար փոխառել կամ պարտք վերցնել, երբ համապատասխանում եք իրավաբանական օգնություն ստանալու պայմաններին:

Միջնորդավճար չգանձող ՆԾՀԳ խորհրդատուները սովորաբար աշխատում են բարեգործական կազմակերպություններում, որոնք օգնում են կոնկրետ համայնքների կամ խոցելի խմբերի (օրինակ՝ կոնկրետ քաղաքում կամ տարածքում ապրող մարդկանց, փախստականներին, կանանց, երեխաներին և այլն): Բացի այդ, նրանք կարող են առաջարկել միայն առանձնահատուկ կամ սահմանափակ ծառայություն: Հնարավոր է՝ նրանք չկարողանան Ձեզ օգնել հարցաթերթիկը լրացնելու գործում: Սակայն կկարողանան օգնել այլ հարցերում, օրինակ՝ գտնել իրավաբանական օգնություն տրամադրող իրավաբանի կամ խնդրել ժամկետի երկարաձգում:

Այլ իրավաբաններ

Կարող եք փաստաբաններ գտնել Փաստաբանների միության կայքում, ներառյալ իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբաններ: Նրանք, ովքեր չեն տրամադրում իրավաբանական օգնություն, մեծ մասամբ վճար կգանձեն Ձեզնից: Միջնորդավճարներն ամենայն հավանականությամբ մատչելի չեն լինի, եթե ստանում եք ապաստանի տրամադրման հետ կապված աջակցություն: Կան այլ տեսակի իրավաբաններ, որոնք գուցե կարողանան օգնել, բայց նրանք համեմատաբար սակավ են:

Կարելի՞ է ընկերոջս խնդրել օգնել ինձ

Դա սովորաբար վատ գաղափար է: Սակայն անօրինական ոչինչ չկա, եթե ընկերը Ձեզ օգնի լրացնել հարցաթերթիկը կամ որոշել, թե ինչ տվյալներ նշել այդտեղ՝ պայմանով, որ՝

- նրան չեք տալիս փող կամ նվերներ (նույնիսկ շնորհակալություն չեք հայտնում)
- նա չի աշխատում կամ կամավորության հիմունքներով չի գործում Ձեզ որևէ կերպ աջակցող կազմակերպությունում
- նա չի օգնում շատ այլ մարդկանց, որոնք գտնվում են նմանատիպ հանգամանքներում կամ ունեն ապաստանի կամ ներգաղթի հետ կապված այլ խնդիրներ

Եթե վերը նշվածներից որևէ մեկը տեղի ունի, ապա Ձեր ընկերը հավանաբար գործում է քրեորեն պատժելի արարք և կարող է դատապարտվել տուգանքի կամ ազատազրկման:

Ինչու՞ է ընկերոջ օգնությանը դիմելը սովորաբար վատ գաղափար

Պատճառները շատ են.

- Հնարավոր է, որ Ձեր ընկերը չունենա անգլերենի բավականաչափ լավ իմացություն, կամ գուցե նա բավականաչափ լավ չի տիրապետում Ձեր լեզվին
- Գուցե ընկերը չլինի նույնքան ուշադիր, որքան վերապատրաստված մասնագետը, և կատարի սխալներ կամ ճիշտ չհասկանա Ձեզ ու գրի առնի սխալ տեղեկություններ

- Ընկերը կարող է չիմանալ, թե ինչն է ներառելու համար տեղին կամ կարևոր
- Հնարավոր է՝ ընկերը չհասկանա իրավաբանական տերմիններն ու հասկացությունները և կարող է սխալ թարգմանել կամ մեկնաբանել հարցերը, ինչի պատճառով կարող եք սխալ պատասխաններ տալ նրան
- Գուցե հարկ լինի այնպիսի բաներ ասել ընկերոջը, որոնք դժվարընկալելի կամ շփոթեցնող են, և դա կարող է ազդել նրա հետ Ձեր հարաբերությունների վրա
- Հնարավոր է, որ չափից ավելի մեծ բեռ դնեք ընկերոջ վրա. դա ահագին աշխատանք է, և նա իրեն պատասխանատու կզգա, եթե Ձեր հայցն ուշանա կամ չբավարարվի
- Եթե նա պարզապես ծանոթ կամ ընկերոջ ընկեր է, ապա կարող է քիչ մղում ունենալ ուշադիր լինելու կամ Ձեր շահերին համապատասխան գործելու համար

Կարող են լինել նաև այլ պատճառներ:

Կարո՞ղ է փախստականների հարցերով զբաղվող որևէ տեղական կազմակերպություն օգնել ինձ

Փախստականների հարցերով զբաղվող տեղական կազմակերպությունները և այլ բարեգործական ընկերություններ կարող են Ձեզ օգնել լրացնել ձևաթուղթը միայն այն դեպքում, եթե նրանց գործունեությունը կանոնակարգվում է Ներգաղթային ծառայության հանձնակատարի գրասենյակի (ՆԾՀԳ) կողմից 2-րդ կամ ավելի բարձր աստիճանում (տե՛ս վերևում): Քիչ կազմակերպություններ են համապատասխանում այս կատեգորիային: Նույնիսկ համապատասխանելու դեպքում դրանք ի վիճակի չեն լինի օգնել յուրաքանչյուրին, ով ունի այդ օգնության կարիքը:

ՄԹՎՆ-ն մտադիր է բավականին կարճ ժամանակամիջոցում թողարկել այդ ձևաթղթերի մոտ 12000 օրինակ: Յուրաքանչյուր ձևաթղթի լրացման համար կպահանջվի անորոշ ժամանակ: Կազմակերպությունների մեծ մասը, որոնք գրանցված են ներգաղթի հարցերով խորհրդատվության ոլորտում, արդեն իսկ աշխատում են ամբողջ ծանրաբեռնվածությամբ և մեծ ջանքեր են գործադրում առկա պահանջարկը բավարարելու համար:

Հնարավոր է՝ կազմակերպությունները կարողանան օգնել, օրինակ, այսպիսի հարցերում.

- Ձեզ ուղղորդեն ներգաղթի հարցերով զբաղվող գրանցված խորհրդատուի մոտ, երբ հնարավոր է (թեև հաճախ դա հնարավոր չի լինում կարճ ժամանակում)
- Ձեզ օգնեն վերջնաժամկետի երկարաձգում խնդրել ձևաթուղթը լրացնելու նպատակով, քանի դեռ խորհրդատու եք փնտրում Ձեզ օգնելու համար

Հնարավոր է՝ կարողանան ձևաթուղթը Ձեզ համար կարդալ Ձեզ հասկանալի լեզվով: Սակայն, հաշվի առնելով ձևաթղթի ծավալը, դա կարող է նրանցից պահանջել բանավոր թարգմանիչներին վճարելու համար զգալի ծախսեր կատարել, և հնարավոր է, որ հրաժարվեն դա անելուց:

Եթե գրանցված չեն, ապա չպետք է օգնեն լրացնել ձևաթուղթը:

Եթե վերադարձնեմ հարցաթերթիկը, ե՞րբ կարելի է ակնկալել որոշումը

Կարճ պատասխանը՝ չգիտենք: Սակայն քաղաքականության նպատակն ըստ հնարավորին արագորեն դրական որոշումներ կայացնելն է, ուստի գուցե ստիպված չլինեք շատ երկար սպասել:

Ես խնդրել եմ ժամկետի երկարաձգում, ի՞նչ անեմ հետո

Ներքին գործերի նախարարությունն է պատասխանելու խնդրանքին: Եթե ինքներդ եք ներկայացրել խնդրանքը կամ դա արել եք ընկերոջ կամ տեղական բարեգործական կազմակերպության օգնությամբ, ապա **պետք է պատասխանների համար ստուգեք Ձեր փոստը, էլեկտրոնային փոստը և այլն**:

Եթե պատասխանեն, հնարավոր է, որ տրամադրեն Ձեր խնդրածից ավելի կարճ երկարաձգում: Գուցե հարկ լինի երկարաձգում խնդրել մեկից ավելի անգամ:
Եվ վերջապես, նպատակն այն է, որ գտնեք օրինական ներկայացուցիչ, ուստի շարունակեք փնտրել:

Ի՞նչ կարող եմ անել, եթե իմ հայցը համարվի հետ կանչված

Բողոքարկման իրավունք չկա: Եթե բաց եք թողել վերջնաժամկետը, կարող եք գրել Ներքին գործերի նախարարությանը (asylumcustomercommunicationshub@homeoffice.gov.uk) և խնդրել հայցի վերականգնում՝ բացատրելով պատճառները, թե ինչու չեք կարողացել ժամանակին վերադարձնել հարցաթերթիկը:

Եթե մերժում ստանաք, կմնա երկու հնարավորություն՝

- անցնել դատական վերահսկողության վարույթ
- ներկայացնել «լրացուցիչ նյութեր նոր հայցի վերաբերյալ»

Ի՞նչ է դատական վերահսկողությունը

Դուք կարող եք դատարան դիմել դատական վերահսկողության համար, երբ որևէ պետական մարմին (այս դեպքում՝ ՄԹՎՆ) կատարում է ինչ-որ անօրինական, անտրամաբանական կամ առնվազն շատ անխոհեմ գործողություն: Եթե լինեք առաջիններից մեկը, ում հայցը համարվել է հետ կանչված, կգտնվեն փաստաբաններ, որոնք կկամենան օգնել Ձեզ: Սակայն, եթե այդ որոշումների առաջին դատական վերահսկողությունը ձախողվի, դա այլևս չի լինի տարբերակ:

Դատական վերահսկողությունը թանկ արժե: Գործընթացը սկսվում է ՄԹՎՆ-ին ուղղված գրությամբ՝ խնդրելով չեղարկել իրենց որոշումը՝ դատարան դիմելու փոխարեն: Եթե ՄԹՎՆ-ն մերժում է, այդ դեպքում դիմում եք դատարան: Միայն փաստաբանը կամ դատական փաստաբանը կարող են Ձեզ ներկայացնել դատարան դիմելու դեպքում: ՆԾՀԳ 3-րդ աստիճանի խորհրդատուն կարող է նախնական գրություն

կազմել Ձեզ համար: Կարող եք ստանալ իրավաբանական օգնություն՝ Ձեր օրինական ներկայացուցչի ծառայության դիմաց վճարելու համար, եթե բավականաչափ ծանրակշիռ փաստարկներ ունեք:

Եթե դատական վերահսկողությունը հաջողի, Ձեզ կարգավիճակ չի շնորհվի: Փոխարենը՝ կվերադառնաք այն նույն դիրքը, որում գտնվում էիք նախքան Ձեր հայցը հետ կանչված համարելը՝ ապաստանի առկախ հայցով, որի վերաբերյալ որոշում դեռ չի կայացվել:

Գործում է դատական վերահսկողության համար դիմելու ժամանակային սահմանափակում. պետք է դա անեք հնարավորինս շուտ և հայցը հետ կանչված համարելու վերաբերյալ որոշումը ստանալուց հետո 3 ամսվա ընթացքում:

Ի՞նչ է նշանակում «լրացուցիչ նյութեր նոր հայցի վերաբերյալ»

«Լրացուցիչ նյութերը» սոսկ նոր ապացույցներ և իրավական փաստարկներ են առ այն, թե ինչու պետք է ճանաչվեք փախստական, նույնիսկ եթե ապաստանի մերժում եք ստացել, կամ Ձեր հայցը համարվել է հետ կանչված: Դուք պետք է դրանք անձամբ ներկայացնեք Ներքին գործերի նախարարություն, սովորաբար՝ Լիվերպուլում:

Երբ Ներքին գործերի նախարարությունը ստանա լրացուցիչ նյութերը, կարող է անել հետևյալ երեքից մեկը.

- Ձեզ շնորհի փախստականի կարգավիճակ կամ տրամադրի մարդասիրական պաշտպանություն
- մերժի նյութերը, բայց ընդունի, որ առկա է նոր հայց, ինչը նշանակում է, որ իրավունք կունենաք բողոքարկելու
- մերժի նյութերը՝ համարելով, որ դրանք չեն կազմում նոր հայց

Որպեսզի լրացուցիչ նյութերը կազմեն նոր հայց, դրանք պետք է լինեն ինչ-որ նոր բան, որը նախկինում քննության չի առնվել: Եթե Ձեր հայցը համարվել է հետ կանչված, ապա ՄԹՎՆ-ն ոչինչ էլ քննարկած չի եղել, ուստի ոչինչ նոր չէ: Հետևաբար, Դուք *պետք է* ձեռք բերեք բողոքարկման իրավունք, եթե այդ նյութերը մերժվել են:

Լրացուցիչ նյութեր ներկայացնելու մեծ թերությունն այն է, որ նոր հայցը կհամարվի 2022 թվականի հունիսի 28-ից հետո ներկայացված: Սա նշանակում է, որ Ձեզ կարող են շնորհել նվազ նպաստավոր կարգավիճակ, քան կունենայիք, եթե Ձեր հայցը համարված չլիներ հետ կանչված: Դա կարող է նրանց հնարավորություն տալ ասելու, որ Ձեր նոր հայցն անընդունելի է: Բայց դա քիչ հավանական է: